Գիրք նվիրելու օրը ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում

Միջոցառման օրակարգ

Գիրք նվիրելու օրը ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում - 19.02.2025

12:00	ԵՊՀ գրադարանի մասնաշենքի նախասրահ (կենտրոնական մուտքի կողմից) **ԵՊՀ ուսանողների և հյուրերի շրջայց գրադարանում - Մեկնարկի ժամը՝ 12:00-ին, 13:00-ին, 14:00-ին, 15:00-ին** **Ծանոթացում գրադարանի** • *Գործառույթներին* • *Ընթերցասրահներին* • *Օգտվելու կանոններին* • *Ընձեռած այլ հնարավորություններին*
14:00	ԵՊՀ գրադարանի մասնաշենքի նախասրահ (կենտրոնական մուտքի կողմից) **Գրքերի նվիրատվություն՝ ակտիվ ընթերցողներին / Ցուցադրության բացում** *ԵՊՀ գրադարանը գրքեր կնվիրի առավել ակտիվ ընթերցողներին՝ ուսանողներին և դասախոսներին:* *Տեղի կունենա գրադարանում պահվող հնատիպ և հազվագյուտ տպագրությունների ցուցադրության բացումը:*
14:30	Ճշգրիտ գիտությունների ընթերցասրահ (ԵՊՀ գրադարանի մասնաշենքի 5-րդ հարկ, 503 սրահ, վերելակով՝ 4-րդ հարկ) **«Հետազոտողը՝ գրող (և հակառակը)». աշխատարան** *Ժամանակակից գրող Լուսինե Խառատյանը կվարի աշխատարան՝ գրականության և հումանիտար գիտակարգերի փոխառնչությունների մասին.* • *Մշակութային և սոցիալական հետազոտություններ և գրականություն,* • *Հետազոտական էթիկա և գրականություն,* • *Գրել աշխա՞րհը, թե՞ գրել աշխարհ. իրականության և հորինվածքի միջև,*

- *Բազմաձայնությունն ու ներառականությունը՝ որպես ժամանակակից գրականության միտում:*

Աշխատարանի ակտիվ մասնակիցների համար նախատեսված է նվեր-գիրք՝ Լուսինե Խառատյանի «Սիրիավեպ»-ը:

15:00 Բանասիրական գիտությունների ընթերցասրահ (ԵՊՀ գրադարանի մասնաշենքի 5-րդ հարկ, 501 սրահ, վերելակով՝ 4-րդ հարկ)

«Անհատը և հանրայինը. տեքստեր փոխհարաբերության մասին» թարգմանական ժողովածուի քննարկում

Բանախոսներ.

- ***Հարություն Վերմիշյան***

  ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, դոցենտ

- ***Սոնա Մանուսյան***

  Հոգեբան, սոցիալական հետազոտող, ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» լաբորատորիա

- ***Մարիամ Խալաթյան***

  Սոցիոլոգ, «Սոցիոսկոպ» ՀԿ

16:30 Ճշգրիտ գիտությունների ընթերցասրահ (ԵՊՀ գրադարանի մասնաշենքի 5-րդ հարկ, 503 սրահ, վերելակով՝ 4-րդ հարկ)

«Ինչպես կերտել կերպար և տնօրինել ճակատագրեր». աշխատարան

Ժամանակակից գրող Գրիգը կվարի աշխատարան՝ ստեղծագրության մոտեցումների ու տեխնիկաների մասին.

- *Ինչպես կերտել կերպարներ՝ պատմվածքի / վեպի համար,*
- *Կոնֆլիկտը՝ սյուժեի շարժիչ ուժ,*

- *Գրողը՝ ճակատագրերի ու պատումների տնօրեն:*

Աշխատարանի ակտիվ մասնակիցների համար նախատեսված են նվեր-գրքեր՝ Գրիգի «Հիսուսի կատուն» և «FRIEDENSDORF»-ը:

17:00 Բանասիրական գիտությունների ընթերցասրահ (ԵՊՀ գրադարանի մասնաշենքի 5-րդ հարկ, 501 սրահ, վերելակով՝ 4-րդ հարկ)

Դանիել Քանեմանի «Մտածողություն. արագն ու դանդաղը» գրքի քննարկում

Բանախոսներ.

- ***Լևոն Բաբաջանյան***

  ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ

- ***Դավիթ Հայրապետյան***

  ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ

- ***Լիլիթ Հայրապետյան***

  Գրքի թարգմանիչ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am